

3230

49199-B

W 44

y. 4. n40

3561

34

1006
25225

491.542-82	Chy	
44-44	Receipt	
	Receipt	
	1882	
092	26/7	
049/42	28/2	
Jan	18/11/42	

096 - 10/11/48 0194 13/239

2010

2002

434

ՌԻՍՈՒՄՆ

491.99-8
u-44

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ

34 ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ



ԳՐԵԼ ԵՒ ԿԱՐԳԱԼ

1006
29225

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԻՊ

ՅՈՐԻՆԵՑ Դ. ԱՂԱՅԵԱՆՑ



Տ Փ Խ Ի Ս

ՏՊԱՐԱՆ ՄՈԳՍՎԱԿԱՆՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

1882

34

3083

11847

ԱՅԲԲԵՆԱԿԱՆ ՄԱՍԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

Մարտը տալիս է ձնծաղիկ,
Ապրիլը կապոյտ մանուշակ,
Մայիսին բացվում է վարդը,
Սոխակը երգում անուշակ:
Յունիսը մեզ խոտ է տալիս,
Իսկ Յուլիսը առատ ցորեն,
Օգոստոսը տանձ ու խնձոր
Եւ ուրիշ շատ հասուն մրգեր:
Սեպտեմբերը մեզ տալիս է
Խաղողի բոլոր տեսակը,
Հոկտեմբերը կարմիր գինին,
Նոյեմբերը բողկն ու տակը:
Դեկտեմբերին ձիւն է գալիս,
Յունվարին ծածկվում սար ու ձոր,
Փետրվարին սկսվում է
Փոփոխակի ցուրտ ու տաք օր:
Ահա այսպէս բոլոր տարին
Թաւալվում է չորս շրջանում,
Այս պատճառով չորս ժամանակ,
Չորս եղանակ է մեզ բերում:



Дозволено цензурою. Тифлисъ, 9 Октября 1882 г.

Типография М. Варганянца и Е. противъ Троиц. церк.

Մարտը տալիս է ճնճաղիկ

Մար—տը տա—լիս է ճն—ճա—ղիկ

իկր—տն—ճ

մարտ, արտ, մատ, տատ.

ատամ, արամ, արմատ, մարմար.

տա—լիս է.

տալ, լալ, սալ, էլ, սէլ.

իմ, սիմ, միս, մաս, լար, սար

ամիս, սամի, տարի, մարի

մասիս, մասրի, սարի, տար

Մարտը տալիս է.

ՀԱՅԿԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿՈՒՆԱՐԱԿԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿՈՒՆԵՆՏՐԱԿԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ

Մարտը տալիս է ճնճաղիկ
իկր—տն—ճ
մարտ, արտ, մատ, տատ.
ատամ, արամ, արմատ, մարմար.
տա—լիս է.
տալ, լալ, սալ, էլ, սէլ.
իմ, սիմ, միս, մաս, լար, սար
ամիս, սամի, տարի, մարի
մասիս, մասրի, սարի, տար

Մարտը տալիս է ճնճաղիկ

ճն—ճա—ղիկ

ճի, ինճ, տանճ, սանճ, ծալ, ծամ,

ծիտ, տակ, տիկ, կէս, աղ, մաղ.

տաղ, կալ, լակ, տէր մէկ, սար,

ճաղիկ. իլիկ, տիկին մատիտ, կարաս

կաղին. Մինաս. Մակար. կաղնի.

Մարտը ճնճաղիկ է տալիս:

Մարտ ամիսը ճնճաղիկ է տալիս:

Երամը Մինասին մի ճաղիկ է տալիս:

Չնճաղիկը մարտին կը լինի:

Տիկին Մարիամը Երամի տատն է:

Մասիսը Երարատ սարն է:

ա. է. ը. ի.

լ. ծ. կ. ճ. ղ. մ. ն. ս. տ. ր.

Եպրիլը կապոյտ մանուշակ.

Եպ—րի—լը կա—պոյտ մա—նու—շակ.

պ. շ. ու. ոյ.

պապ, պաս, պատ, կապ, ուր, ում, ուլ

ուշ, շուն, շուտ, նուշ, կոյս, լոյս, ծոյլ.

կատու, կաշի, շամամ, մաշիկ, Երշակ.

կապած, անկապ, պանիր, կապոյտ, Ղուկաս.

Եպրիլը տալիս է կապոյտ մանուշակ:

Մանուշակը կապոյտ ճաղիկ է:

Կապոյտ մանուշակը ճաղկում է ապրիլին:

Եպրիլին ճաղկում է կապոյտ մանուշակը:

Ղուկասը պանիր է ուտում.

Երսէսը պաս է:

Մինասը տասը տանճ ունի

Շուշանիկը մի շամամ ունի

ա. է. ը. ի. ու. ոյ.

լ. ծ. կ. ճ. ղ. մ. ն. շ. պ. ս. տ. ր.

Մայիսին բացվում է վարդը

այ. ց. վ. դ.

այս, այդ, այն, բայց, բան, բոյս, բաց

լաց, ցուրտ, դա, դու, դաս, սարդ,

վաղ, վաշ, վար, վուշ, սայլ, մայր, այծ

այսպէս, այդպէս, այնպէս, վայրի

Վարդան, Վասակ, բամբակ, բակլա, բարի

կացին, դանակ, դաշոյն.

Վարդը մայիսին է բացվում:

Մայիսին վարդը բացվում է:

Կարմիր վարդը բացվում է մայիսին

Մայիս ամսին բացվում է վարդը:

Մասրի ծաղիկը վարդի նման է:

ա. է. ը. ի. ու. ոյ. այ.

բ. դ. լ. ծ. կ. ձ. ղ. մ. ն. շ. պ. ս. վ. տ. ր. ց.

Սոխակը երգում անուշակ

ո. ե. գ. խ

սով, ծով, կով, բոխ, խակ, խաղ, խամ:

խուլ, մուխ, մեխ, սեխ, գեղ, գիր, գոմ

գոյն, գայլ, գող, դող, տեղ, ցեղ, ցեխ,

Գեղամ, Գրիգոր, գերի, խախալ, խաղող

Սոխակը շատ անուշ է երգում:

Ըմենից անուշ երգողը սոխակն է:

Սոխակի երգը շատ անուշ է:

Սոխակը ծախ պէս մոխրագոյն է:

ո. ե

որ, որպէս, որդի, ոսկի, որբ, որդ, որս.

որսորդ, որսկան, ով, ով—որ, երբ—որ.

ես, եկ, եղ, ես եմ, դու ես, մեր, ձեր.

ա. ե. է. ը. ի. ո. ու. ոյ. այ.

բ. գ. դ. լ. խ. ծ. կ. ձ. ղ. մ. ն. շ. պ. ս. վ. տ. ր. ց.

Յունիսը մեզ խոտ է տալիս,
Իսկ յուլիսը առատ ցորեն:

յ. զ. ո.

յոյս, յոյն, յարդ, յարգ, յարկ.

մեզ, ձեզ, եզ, խոզ, զոխ, զարդ, պարզ

ռուս, ուումբ, կեռ, տառ. բառ.

յայտնի, յանկարծ, յատակ, յիսուն, Յիսուս.

լեզու, գազան, գանգակ, ուամիկ, ուեզին:

Յունիսն ու յուլիսը առատ ամիսներ են:

Միսուն ամեն բան առատ է լինում:

Միսուն անտառումը լինիս, ձմեռը՝ դաշտումը

Մեր գեղի անտառումը շատ զկեռ է լինում:

Ես որ խակ զկեռ եմ ուտում բկումս է մնում:

Չանազանը ամեն ամառ գնում է սար:

ա. ե. է. ը. ի. ո. ու. ոյ. այ

բ. գ. դ. զ. ւ. խ. ծ. կ. ձ. ղ. մ. յ. ն. շ. պ. ո.

ս. փ. տ. ը. ց

Օգոստոսը տանձ ու խնձոր

Եւ ուրիշ շատ հասուն մրգեր

օ, և, Տ

օր, օղ, օդ, օձ, տօն, հօր մօր,

հայր, հաց, հուն, բահ, մահ, հող, հեշտ.

և, սև, խև, արև, տերև

Օգոստոսին հասնում են շատ մրգեր:

Նուռը, խաղողը դեղձը եւ հունը մրգեր են:

Օգոստոսին լինում են սեխ, ձմերուկ, շամամ:

Ես այդ ամսին իմ հօր հետ գնում եմ այգի:

Սեպտեմբերը մեզ տալիս է

Խաղողի բոլոր տեսակը,

Հոկտեմբերը կարմիր գինին,

Նոյեմբերը—բողկն ու տակը:

Դեկտեմբերին ձիւն է գալիս
Յունվարին ծածկվում սար ու ձոր
Փետրվարին սկսվում է.
Փոփոխակի ցուրտ ու տաք օր:

իւ. փ. ք.

ձիւն, սիւն, իւր, իւղ, գիւղ, շիւղ

փակ, փոս, փառք, քար, քոյր քեղ, գիրք.

արիւն, հարիւր, փափուկ, քաղաք,

Չիւնը դեկտեմբերին է գալիս:

Նոյեմբերին էլ է ձիւն գալիս:

Սարերումը ձիւնը շուտ է գալիս:

Յունվարին շատ ցուրտ է լինում:

Փետրվարին օրերն սկսում են տաքանալ:

Այդ ամսին եղանակը փոխվում է:

ա. ե. է. ը. ի. ո. օ. ու. իւ. ոյ. այ.

բ. գ. դ. զ. լ. խ. ծ. կ. չ. ձ. ղ. մ. յ. ն. շ. պ.

ու. ս. վ. տ. ը. ց. փ. ք.

Ահա այսպէս բոլոր տարին
Թաւալվում է չորս շրջանում.

Այդ պատճառով չորս ժամանակ,
Չորս եղանակ է մեզ բերում:

Թ, չ, ճ, ժ, ջ

Թաթ, Թութ, չիթ, չեչ, ճաթ, ճութ, ճաղ

մաճ, ճաշ, ժամ, Թեժ, խեժ, ժախ, ժեռ

ջանք, ջուխտ, սաջ, քաջ, լանջ, ունջ, մունջ.

Թանաք, ճանաչ, ջաղաց, ժառանգ, չամիչ

Վճոյլը պատժի արժանի է:

Անճարը, կերել է բանջարը:

Ճրագն իր տակին լոյս չի տալ:

Գողն ինչ կուզի—մութը գիշեր:

Ինչ որ անես, առաջդ կը գայ:

Արած լաւութիւնը չի կորչիլ:

**Մեր դասատան աշակերտների
անունները**

ե ա

Տիգրան Արամեանց.

Արսէնիկ Գուրգէնեանց.

Յարութիւն Յովսէփեանց.

Գրիգոր Միքայէլեանց.

Դանիէլ Իսրայէլեանց.

Յովհաննէս Մարկոսեանց.

Սիմէօն Եսայեանց.

**Մեր դասատան աշակերտուհիների
անունները**

Աշխէն Հայկազունի.

Եղիսաբէթ Արծրունի.

Հայկանուշ Աղայեանց.

Վարսենիկ Հասնազարեանց

Գրեցէք ձեր և ձեր ընկերների անուններն ու ազգանունները:

յ ԱՆՁԱՅՆ

Տղայ, երեխայ, ընծայ, հսկայ, արքայ, ճանպայ, օրուայ, տարուայ....

(Նա) գայ, տայ, լայ, կայ, գնայ, մնայ, աղայ.
կարգայ, իմանայ, մոռանայ, ուշանայ, խնդայ, ուրախանայ, հիւանդանայ, տկարանայ, հասկանայ, լաւանայ....

(Ես) եկայ, իմացայ, մոռացայ, ուշացայ, ստացայ, հասկացայ, ուրախացայ, վերկացայ, վայր եկայ, կերայ, կշտացայ....

ԿԻՍԱԶԱՅՆԱԻՈՐ

հայ, վայ, չայ, փայ, նոյ, հայր, մայր, վայր, ծայր, գայլ, սայլ, փայլ, այլ, բայց, այծ, լոյս, բոյս, կոյս, ծոյլ, թոյլ, նշոյլ....

ԲԱՂԱԶԱՅՆ

յոյս, յոյն, յարգ, յարգ. յարկ, յիշատակ, յիշել, յանկարծ, յայտնի, յատակ.....

ՎԵՐԱՅԱԾ

ուս, դա, նա, սորա, դորա, նորա. (դու) ասա՛, աղա՛, արա՛, կարգա՛, խնդա՛, գնա՛, մնա՛, (օտար բառեր եւ յատուկ անուններ) խաթա, բալա, մաշա, բօշա, ուստա, Յուդա, Երեմիա, Իտալիա....

ՋԱՅՆԱԻՈՐՆԵՐ

ա՛. ե՛. է՛. ը՛. ի՛. ո՛. օ՛. ո՛ւ.

ի՛ւ. եա՛. եօ՛ ո՛յ. ա՛յ.

ԲՈՒՈՐԱԳԻՐ

ա. բ. գ. դ. ե. զ. է. ը. թ. ժ. ի. լ. խ.

ծ. կ. չ. ճ. զ. ճ. յ. ն. շ. ո. չ. պ. ջ.

ո. ս. վ. տ. ր. զ. ւ. փ. ք. և. օ. ֆ.

Գ Լ Խ Ա Գ Ի Ր

Ա. Բ. Գ. Դ. Ե. Զ. Է. Ը. Թ. Ժ. Ի. Լ. Խ. Ծ. Կ. Զ.

Չ. Դ. Ճ. Մ. Յ. Ծ. Թ. Ո. Զ. Պ. Զ. Ռ. Ս. Վ. Տ. Բ.

Յ. Ի. Փ. Գ. Օ. Ֆ.

Ն Օ Տ Ր Ա Գ Ի Ր

ա. բ. գ. դ. ե. զ. է. ը. թ. ժ. ի. լ. խ. ծ. կ. չ.

ճ. զ. ճ. յ. ն. շ. ո. չ. պ. ջ. ո. ս. վ. տ. ր. զ. ւ. փ. ք. և. օ. ֆ.

Ֆ. Գ. Լ. Խ. Ա. Գ. Ի. Ր.

Մ Ա Ղ Կ Ա Գ Ի Ր

Ա. Բ. Գ. Դ. Ե. Զ. Է. Ը. Թ. Ժ. Ի. Լ. Խ. Ծ.

Կ. Զ. Չ. Դ. Ճ. Մ. Յ. Ծ. Թ. Ո. Զ. Պ. Զ. Ռ.

Ս. Վ. Տ. Բ. Ց. Ի. Փ. Գ. Օ. Ֆ.

Շ Ղ Ա Գ Ի Ր

ա. բ. գ. դ. ե. զ. է. ը. թ. ժ. ի. լ. խ. ծ. կ.

հ. ձ. ղ. ճ. յ. ն. շ. ո. չ. պ. ջ. ո. ս. վ. տ. ր. զ. ւ. փ. ք. և. օ. ֆ.

ր. զ. ւ. փ. ք. և. օ. ֆ.

Ա Ք Ա Ղ Ա Ղ

Ա. քաղաղը կանչում է.

Շուղըրուղ՛ն,

Ղ՛ն-ղ՛ն-ղ՛ն:

Պառաւ նանը զարթնում է.

Տա՛-տա՛-տա՛.

Պա՛-պա՛-պա՛.

Ա. քլար, ինչո՞ւ կանչեցիր,

Ինչո՞ւ նանին զարթեցրիր.

Ա՛խ դո՛ւ-դո՛ւ, ա՛յ ջո՛ւ-ջո՛ւ.

* *

Ա՛խ նանի, ջան՛ նանի,

Մեզ մի՛ վեր կացրնի.

Թող մի՛ քիչ էլ մնանք,

Կնից լաւ կշտանանք:

Ա. քլարը շուտ է կանչում:

Ա. քլարը քեզ է խաբում:

Ա. քլար, ինչո՞ւ կանչեցիր,

Ինչո՞ւ նանին զարթեցրիր.

Ա՛խ դո՛ւ-դո՛ւ,

Ա՛յ ջո՛ւ-ջո՛ւ:

1006
2925

Ա Ռ Ա Ի Օ Տ

Արեգակը դուրս է եկել
 Պսպղալով,
 Առաջը հերթից ներս է ընկել
 Առաջողալով,
 Ծիտը ծառին կըչկըչում է
 Ծըլվըլալով,
 Չորումն առուն քըչքըչում է
 Վըշվըշալով,
 Ծոյլ տղայի քունն է տարել
 Խուրմիալով,
 Տրեխները շունն է տարել
 Մըռմըռալով:

Լ Ո Ւ Ս Ա Յ Ա Ի

Լուսացաւ, լուսացաւ, լուսն է բարին,
 ծիտն է ծառին, հաւն է թառին: Աշխատա-
 ւոր, վեր կաց բանի, ծոյլ տղայի քունը տանի:

Ինչո՞ւ աքլարը կանգնած է բակում, պինդ
 պինդ կանչում է իր կուկուրիկուն:— Ի՞նչուր
 որ վաղուց արևն է ծագել, բայց ծոյլ երե-
 խան քնից չէ զարթել: Դեռ չէ վեր կացել
 աղօթքն արել, դպրոցի դասը դեռ չէ սո-
 վորել: Կանչում է աքլարն իր կուկուրիկուն,
 տղայոց պարտքը միտերն է ձրգում:

Ծ Ե Մ Ո Ւ Ա Մ Գ Ա Ռ Ն Ի Կ

— Ինչի՞ կուլաս դու, գառնիկ.
 «Խիտ ծեծ կերայ ես, մայրիկ:
 — Բեզ ո՞վ ծեծեց, ի՞մ գառնիկ.
 «Մէկ չար պառաւ, ախ, մայրիկ:
 — Ինչի՞ ծեծեց քեզ, գառնիկ.
 «Ծառի տակն էի, մայրիկ:
 — Ինչո՞վ ծեծեց քեզ, գառնիկ,
 «Մեծ մահակով, ո՞հ, մայրիկ.
 — Ո՞րտեղիդ զարկեց, գառնիկ.
 «Ոտիկներիս, ո՞՛հ, մայրիկ:
 — Ի՞նչպէս լացիր դու, գառնիկ.
 «Մէ՛... մէ՛... մէ՛... մէ՛...

Ծ Ի Տ Ը Ե Ի Բ Ա Ջ Է Ն

Ծիտը ծառին ծվըլում է:
 Ծի՛ւ, ծի՛ւ, ծի՛ւ:
 Բազէն գըլխին պտըտվում է.
 Վ՛ո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ:
 Ծիտը լուեց, ծիտը վախեց.
 Վ՛ա՛յ, վա՛յ, վա՛յ:
 Բազէ՛, թը՛ռռ. բազէ՛, թը՛ռռ,
 Հ՛ա՛յ, հա՛յ, հա՛յ:

Բազէն թռաւ,

Բազէն փախաւ,

Ինչ լաւ էլաւ.

Հէ, Տէ, Տէ:

Ծիտիկ միտիկ,

Պիծիկ միծիկ,

Պըտպըտուրիկ, չըլպըլտուրիկ,

Դու լաւ պրծար չար բազէի

Սուր ճանկերից. հա՛, հա՛, հա՛:



ՀԱՐՍԻ ՀԱՇԻԻԸ.

Երկուշաբթի հաց կը թխեմ: Երեքշաբթի լոջ կը թրջեմ, չորեքշաբթի լուացք կանեմ: Հինգշաբթի կար կը կարեմ: Ուրբաթ օրը պաս կը կենամ: Չաբաթ օրը ժամ կը գնամ: Կիրակի օր փռանց փռանց, կըզարգարուիմ կերթամ հօրանց:



Ա Ս Ա Ծ Է

Ով ալարի, ո՛չ դալարի:—Այսօրուան գործդ վաղուան մի՛ ձգիր:—Հաց ու պանիր, կեր ու բանիր:

Հ Է Ք Ի Ա Թ

1.

Չմեռն էր. գիշերը երկար: Գիւլնազ տատը՝ գլուխը քուրսու վրայ դրած՝ ննջում էր: Արեխայքը վրայ թափուեցան, քունը փախցրին, որ իրանց համար մի Տէքիաթ ասի: Նա էլ սկսեց—



«Ինչէլ է չի էլել մի սիրուն արտուտիկ. կտուցը սուր՝ մեր Արշակի քթի նման. բմբուլը խուճուճ՝ Տիգրանի մազերի նման. թևերը փափլիկ՝ Աղիկի կոնների նման: Ահա այսպէ՛ս սիրուն էր արտուտիկը:

—Բա ինձ նման ոչինչ չունէ՞ր, ասաց Վանին:

—Բա ի՞նձ, ձայն տուեց Հռիփսիկը:

—Ինձ էլ չասեցիր, տատի, լաց էլաւ Նազրիկը:

—Սպասեցէք, սպասեցէք, երեխէ՛ք, դեռ չեմ վերջացրել: Ամենքիդ էլ բաժին կը տամ, ասեց տատը և շարունակեց.

,,Աչիկներն այնպէս նախշուն էին, ինչպէս, Վանի, քո աչքերը: Կատարն այնպէս կարմիր էր, ինչպէս, Հռիփսիկ, քո թշերը: Ոտներն այնպէս բարակ էին, ինչպէս, Նազիկ, քո մատները:

— Ես ոտները չեմ ուզում, ասաց Նազիկը:

— Ալ, ոտները թող մնայ, տոտ իկները կուզե՞ս.

— Չեմ ուզում, քոտիկներն էլ չեմ ուզում:

— Բա ի՞նչը կուզես, Նազիկ.

— Ես աչիկներն եմ ուզում:

— Աչիկներն ինձ է տուել տատը, քեզ չեմ տալ, գոչեց Վանին:

— Նազիկ, կուզե՞ս կատարը դ՛ու վեր առ, տոտիկները ես կը վերցնեմ, ասեց Հռիփսիկը:

— Չեմ ուզում. ես աչիկներն եմ ուզում:

— Վանի, դու կատարը վերցրու, ես տոտիկները, իսկ Նազիկը՝ աչիկները:

— Ի՞նչ եմ անում կատարը, տատը ում ինչ որ տուել է, այն է նրանը:

— Ղշմարիտ է ասում Վանին, ամեն կողմից գոչեցին երեխայքը:

Նազիկը գո՛հ չը մնաց, և վէճը երկար շարունակվեց: Բայց տատը չէր լսում. նա գլուխը դրել էր բարձին և քնել: Եւ չէին կարող զարթեցնել: Վեր կացան իրանք էլ մտան տեղերը:

2

Միւս երեկոյին երեխայքը էլի հաւաքուեցան տատի մօտ, որ շարունակի հեքիաթը: Նա էլ սկսեց—

,,Անցած դարնանը մեր պարտէզումը մի սիրուն կրկու կար: Մէկ անգամ ես նրստած էի ծառի տակին, և դուք մէկ մէկ եկաք ինձ մօտ:

Երբ որ Արշակը ներս մտաւ, կրկուն կանչեց՝ «կո՛ւկ—կո՛ւ»:

Եկաւ Շողիկը, ասեց՝ «պո՛ւպ—պո՛ւ»:

Եկաւ Տիգրանը՝ ասեց՝ «դո՛ւդ—դո՛ւ»:

Եկաւ Վանին, ասեց՝ «գո՛ւգ—գո՛ւ»:

Եկաւ Հռիփսիկը, ասեց՝ «բո՛ւբ—բո՛ւ»:

Եկաւ Նազիկը, կրկուն էլ ոչինչ չասեց, թուաւ գնաց...

—Օ՛խ, օ՛խ, Նազիկ, օ՛խ, օ՛խ, կրկուն
քեզ համար ոչինչ չի ասել,— միաբերան
գոչեցին երեսայքը:

* *

Նազիկը շատ նեղացաւ, թէ ինչո՞ւ
կրկուն իր համար ոչինչ չի ասել, և սկսեց
լաց լինիլ: Տատը նորան ասեց.

—Նազի՛կ, գիտե՞ս ինչու կրկուն քեզ
համար բան չասեց. նու վախեցաւ քեզ բան
ասել: Ինչ որ ասէր, դու չը պիտի հաւա-
նէիր, ուրիշն էլ իրանը քեզ չէր տալու,
ինչպէս անցած երեկոյին:

—Տա՛տի ջան, տա՛տի, որ մէկ էլ կը-
կուն գայ, ասա ինձ համար էլ մէկ բան
ասի,— ազաչեց Նազիկը, և նորանից յե-
տոյ շատ խելքացաւ:

Ճ Օ Լ Ի (Արեւաբեր)

Ճօլի ճօլի, ճօլ չը կայ,
Խաւիժ անեմ, եղ չը կայ,
Ճօլին ընկել է ծովը,
Ծովեցը հանող չը կայ:
Չուան բերէք, դուրս հանենք,
Թօռկ բերէք, կցան անենք,
Չու բերէք, թաթին դնենք,
Եղ բերէք, վարսը քսենք:
Խոփը պատումն է ժանգոտել,
Չևիչը տափումն է ժանգոտել,
Կանաչ դաշտերին ենք կարօտ,
Կարմիր արևին ենք կարօտ:

Ա Ր Ե Ի

Արև, արև, ե՛կ, ե՛կ,
Օ՛րդի քարին վէ՛ր եկ.
Սև-սև ամպեր, հեռացէ՛ք,
Արևին ճանապայ տուէք.

Թողէք դա գայ մե՛զ մօտ.
 Դրա լոյսին ենք կարօտ:
 Կարմիր արև, եկ, ե՛կ,
 Նախշուն քարին վե՛ր եկ:
 Արևը յաղթեց ամպերին,
 Շողքը ձրգեց սարերին.
 Օհգի քարը, տե՛ս, տե՛ս.
 Պսպրղում է ոսկու պէս.
 Սիրուն արև, մի՛շտ եկ,
 Օհգի քարին վե՛ր եկ:

Ն Ո Ւ Ր Ի (Անձրեւաբեր)

Նուրին նուրին եկել է, Աջբա Հուրին եկել է,
 Շիլա շապիկ հագել է, կարմիր գօտիկ կապել է.
 Եղ բերեք վարսը քսենք, ջուր բերեք՝ գլխին ածենք.
 Մեր նուրինի փայլ տուէք, ուտենք, խմենք, քեփ անենք.

Ա Ն Ձ Ր Ե Ի.

Անձրեւ անձրեւ, ցած արի,
 Բըսցուր ցորեն ու գարի.
 Բըսցուր ծաղիկ, կանաչ խոտ,
 Աւել փոշի, մաքրէ օդ:
 Անձրեւ անձրեւ, ցած արի,
 Քայլդ ամենուս բարի:

ԱՆՏԱՌԻ ՄԱՆՈՒԿԸ

I

Անտառի խորքում մի ճօճ կար կապած
 և նրա մէջ մի մանուկ դրած: Լաց էր լինում
 մանուկը: Մայր չը կար մօտը, որ ծիծ
 տար, հայր չը կար՝ որ պահպանէր: Անտառն
 անմարդաբնակ էր:

Մի գլխոտ պախրակով կաթնալից կըրծ-
 քով եկաւ ճօճի մօտ իր հորթուկի հետ և
 տխուր ձայնով երեխին ասեց—

—Սիրուն երեխայ, որք ես մնացել,
 Քո անբախտ մօրը գերի՛ են տարել,
 Նա գնաց, կորա՛ւ, էլ յետ չի գալու,
 էլ ոչ մի անգամ քեզ ծիծ չի տալու:
 Նա քեզ փաթաթեց լայն տերեւներով,
 ճօճի մէջ կապեց «նանիկ» ասելով,
 Նա լաց էր լինում աղի արցունքով,
 Իր վերջին նանիկն ասում էր լալով.

„Նինի՛, բալիկս, նինի՛,
 Մեծատերև թաթաշոր,
 Մանրատերև ոտաշոր.“

Քաւին կանի, ժաժ կը տայ,
Պախրէն կը գայ ծիծ կը տայ.
Նինի՛, գառնուկս, նինի՛:

Ահա եկել եմ, որ քեզ ծիծ տամ ես,
Պահեմ պահպանեմ իմ հորթուկիս պէս:

2

Պախրան ծիծ տուաւ երեխին: Երեխան
կշտացաւ ու քնեց: Պախրան իր հորթը
թողեց երեխի մօտ, իսկ ինքը գնաց արա-
ծելու, որ կաթը շատացնի և գայ երկուսին
էլ ծիծ տայ:

Հորթը մնաց երեխի մօտ, օրօրեց նրան
և նանիկ ասեց—

Նինի՛, մանկիկ, նինի՛:

Իմ մայրը քո մօր նման չի,

Ամեն խոտից կծիւ չի,

Ամեն ջրից խմիւ չի,

Ամեն տափի նստիւ չի,

Նա սարէսար ման կը գայ,

Որք կը գտնի, ծիծ կը տայ:

Նինի՛, մանկիկ, նինի՛:

Պախրան կուրծքը լեքը յետ դարձաւ ա-
րօտատեղից և ծիծ տուաւ երեխին էլ, հոր-
թին էլ:

Ով որ տարով կը մեծանայ, մեր երե-
խան օրով մեծացաւ: Հատ չանցաւ, նա

դուրս եկաւ ճօճիցը մի օր չորեքթաթ
տուաւ, միւս օրը ոտքի կանգնեց: Մի քա-
նի անգամ սկըհաց վէր ընկաւ, բայց շու-
տով ամրացաւ և սկսեց պախրի ետեւից
վազվզել:

3

Թագաւորին որդի չէր լինում: Երագումն
ասացին. «Թագաւոր, Լստուած քեզ մի
որդի պիտի տայ անտառի խորքումը,»:

Մէկ անգամ անգաւակ թագաւորը որ-
սի գնաց իր որսորդների հետ: Հատ ման
եկան, ոչինչ չը գտան, ոչ մի որս չը պա-
տահեց նրանց: Բայց որ հասան անտառի
խորքը, այնտեղ մի պախրի հետք գտան և
նրա մօտ երեխի ոտնատեղեր: Լմենքը
մնացին զարմացած և չէին հաւատում, որ
երեխի կը լինի ոտնատեղերը. բայց թագա-
ւորը իսկոյն յիշեց իր երազը և հրամայեց
որսորդներին, որ երեխի հետքը քշեն, և ուր
որ լինի, գտնեն նրան:

Որսորդները գնացին, և երկու ժամ
չանցած՝ մի սիրուն տղայ բերին թագաւո-
րի մօտ և պատմեցին, թէ ինչպէս գտան
նրան պախրի ծիծը ծծելիս:

Թագաւորը շատ ուրախացաւ: Երեխին

զրկեց, համբուրեց և անունը դրաւ Պ ա խ-
ր ա տ ու ը ր :

Պ ա խ ր ա տ ու ը ը ր ւ մ ե ծ ա ց ա ւ թ ա գ ա ւ ո ը ր ի պ ա-
լ ա տ ու մ ր , լ ա ւ ու ս ու մ ա ու ա ւ , վ ե ր ջ ը դ ա ո ա ւ
թ ա գ ա ւ ո ը ր և մ ե ծ զ օ ը ք ք ո վ գ ն ա ց ի ր մ օ ը ր ր
ա գ ա տ ե ց գ ե ր ու թ իւ ն ի ց :

ՈՐԲԻ ՊԱՀՈՂՆ ԱՍՏՈՒԱԾ Է.

Փայլուն արեւը արգէն մայր մտաւ,
Լուսինն էլ վազուց գնաց թաք կացաւ,
Գիշերուայ մութը աշխարհս պատեց
Եւ աշնանային ցուրտ քամին փչեց:
Ամեն մարդ քաշուեց իւր տունը մտաւ,
Ամեն երեխայ մօր գիրկըն ընկաւ.
Միայն մի խեղճ որբ որ չունէր հայր, մայր,
Ոչ մի ազգական, ոչ քոյր, ոչ եղբայր,
Ոտքերը բոքիկ, տկուր ու քաղցած,
Մի տան պատի տակ մնաց կուչ եկած:
Բարի տան-տէրը վերեւից նայեց,
Մեր թշուառ որբին ներս հրաւիրեց.
Եւ այնուհետեւ տարաբախտ տղան
Ունէր իւր համար տէր ու տիրական.

ԾՆՆԴԵԱՆ ԵՐԳ

Ալէլուիա՝ ալէլուիա.
Զրօրհնէքը ճրագուստով,
Զատիկը՝ արեւուստով.
Թէ քնած էք, վեր զարթեցէք,
Թէ զարթուն էք, լաւ լսեցէք:

Մարիամ եկաւ լալով լալով,
Լալով լալով, մղկրտալով.
Լուսաթաթախ մանուկ ծնեց,
Ծով ու ցամաք լուսով պատեց:

Ձեր տունն է չորեքսիւնի,
Զորս սիւներից սրն է սալի:
Սալը չարակամի սրտին,
Ապրի բարեկամի որդին:
Տունը՞էն, տունը՞էն,
Ձեր տղոց անունն ի՞նչ է.
— Հայկ ու Արամ է:

Դրանք նստեն մէկ սեղանի,
Գինի խմեն Նախջվանի,
Ձեր թշնամուն գետը տանի,
Գայլակռաւը աչքը հանի.
Մէկ պոչատ հաւ, մէկ ըստիլ եղ
Տուէք. Ալէլուիան տանի:

ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ԵՐԳ.

Ճըչանակ, ճըչան ճըչան,
Ճըռճռան, ճըռռան, ճռռան:

Մեծ պատին զարթեցրէք,
Մեր աշխարհից փախցրէք,

Ջրգուեցանք դառը սոխից,
Կշտացանք զոխ ու բոխից,
Լոբին փորներս ուռցրեց,
Մախոխն էլ լաւ պատըժեց:

Բողազներս այրուեցաւ,
Ձայներս կտրուեցաւ.
Ճրջացէք, ճռճռացէք,
Մեծ պատից մեզ փրկեցէք:

Ճրջանակը ճրջաց, ճռռանը ճռռաց.
Մեծ պատը փախաւ, էլ յետ չեկաւ:

ՌԻՏԵԼԻՔ ԵՒ ԽՄԵԼԻՔ.

Մարդը ուտում է, խմում է, կրծում է, ծծում է,
խրպշտում է, կուլ է տալիս, լամլամում է: Գինին խր-
մում են, իսկ քացախը ուտում են իրան գլխու կամ
կերակուրի մէջ: Կաթը բրթում ուտում են, իրան
գլխու եւ թէյի հետ խմում են: Երեխան ծծում է մոր
կաթը: Սաջուրը, խաշուն, շորվան, թանէ սպասը,
փթրուկը, մախոխը ուտում են եւ խրպշտում են: Միսն
ուտում են, իսկ ոսկորը՝ կրծում: Դեղը խմում են,
եթէ ջրի է, իսկ դեղահատերը կուլ են տալիս: Պինդ-
կերակուրները ուտելիս՝ ծամում են: Բայց ատամ չու-
նեցողները լամլամում են: Մաստակը ծամում են որո-
ճող ուղտի նման: Շունը լակում է, լափում է:

Գ Դ Ա Լ Փ Ո Ս

Ամառն էր: Հունձն ընկել էր: Մէկ լոռեցի եւ
մէկ աշտարակցի միասին հունձ էին անում: Ճաշի
ժամանակ նրանց համար մածուն բերին մի մեծ մաթ-
րաթով: Բայց երկու գդալի տեղ մէկն էին բերել:

Երբ որ մածնի բրթուճը պատրաստեցին, աշտա-
րակցին ասեց.

—Գդալը մէկ հատ է. արի գդալ-փոխ անենք,
գդալ-փոխ ուտենք:

Լոռեցին չը համաձայնեց, ասեց.

—Թող ես գդալով ուտեմ: դու ձեռով կեր:

—Ո՛չ, պատասխանեց աշտարակցին: Որովհետեւ
գդալ-փոխ չես ուղում: արի մէկ բան ասեմ: այնպէս
անենք, Ով որ մեղանից եօթը գիւղի անուն տայ վրայ-
վրայ, շուտ-շուտ, գդալով նա ուտի:

—Լաւ. առաջ ես կասեմ: ասեց լոռեցին ու սկսեց.

—Հլէ՛, Լժ...ուխ՛. հլէ՛, Ո՛ւ...զո՛ւն...լա՛ր...

—Լոռեցին միայն երկու գիւղի անուն տուաւ,
այն էլ չը կարողացաւ շուտ շուտ ասել, ու սուս կա-
ցաւ: Յետոյ աշտարակցին սկսեց, եւ կարկտի պէս վրայ
տուաւ —

Ուշի — Ուշական

Փարպի — Բիրական

Թալին — Թալիշ — Մաստարա

Գդալի պոչը դէսն արա:

Ասեց ու գդալն առաւ լոռեցու ձեռքիցը: Լոռե-
ցու բերանը մնաց բայ. բայց էլ ի՛նչ կարող էր անել:
խաղը տանուկ էր տուել...

ՇՈՒՏԱՍԵԼՈՒԿՆԵՐ

Ո՞վ է կարող երեք անգամ շուտ շուտ ասել—

1. Եպիսկոպոս—կաթողիկոս
Կաթողիկոս եպիսկոպոս.

2. Ուսուցիչն ուսուցչին ասեց սնուցիչ
Սնուցիչն ուսուցչին ասեց ուսուցիչ:

3. Ծառի ճուտը ճմբան ծէրին ճիտը ծուռ:

4. Ակնակապ Ակոբ ապէր դու ինձ համար մի
ջուխտ ղկը կապի ես քեզ ասեմ քեզ արքայութիւն
ակնակապ ակոբ ապէր:

ԽԵԼՕՔ ԳԼՈՒԽԸ.

Բերանն ասեց. ես ամեն ինչ կուտեմ, կը խմեմ:

Գլուխն ասեց. հըմ:

Ձեռքն ասեց. ես ամեն ինչ կը շինեմ, կը քանդեմ:

Գլուխն ասեց. հըմ:

Լեզուն ասեց. ես ինչ ուզենամ կասեմ, կը պատմեմ:

Գլուխն ասեց. հըմ:

Ոտքն ասեց. ես ամեն տեղ կերթամ, ման կըգամ:

Գլուխն ասեց. հըմ:

Բերանն ու ձեռքը, լեզուն ու ոտքը ասացին գլխին.

—Ինչո՞ւ ես «հըմ» անում:

Գլուխը պատասխանեց.

—Ինչ անէք չանէք, առաջ ինձ պիտի հարցնէք:

—Բերանը մնաց բաց, իսկ լեզուն կըմկըմալով ասեց.

—Հա... ըզրորդ, ըզրորդ է ասում գրգըգըլուխը...

Ոտքով ման եմ գալիս,

Ձեռքով աշխատում:

Աչքովս տեսնում եմ:

Ականջով լսում:

Իսկ իմ չարն ու բարին,

Իմ լաւն ու վատը

Ո՞վ է իմանում:

—Իեւջը գլուխս:

ՀԻՆԳ ԶԳԱՅԱՐԱՆՔ

Ես աչքով տեսնում եմ:

Ականջով լսում:

Գլխով հոտ եմ առնում

Լեզուով ճաշակում:

Իսկ ցուրտն ու տաքը,

Կոշտն ու կակուղը

Ինչո՞վ եմ զգում

—Բոլոր մարմնովս եմ շօշափում:

ԱՐՀԵՍՏ ԸՆՏՐՈՂ ՄԱՆՈՒԿԸ

Թորոսի որդին մի ծոյլ տղայ էր, ոչ գիր էր սովորում եւ ոչ մի արհեստ:

—Ի՞նչ արհեստ սովորիմ:—փնթփնթում էր նա.

—կլեկչութիւնը շատ լաւ արհեստ է, բայց բոքիկ ոտքով ամանում կանգնել, արագ պրտըտել, դա այնքան հեշտ չէ: Աւելի հեշտ է փուքսի փչելը, բայց այդ

իմ ձեռքում երկար չեն թողնիլ: Վարպետ էլ դառնամ, ի՞նչ եմ անելու. պէտք է մատներով փոքր ինչ բամբակով տաքտաք պղնձին նաշաղիր քսեմ: ձեռքերս այրեմ: Զէ, այդ իմ բան չէ:

—Նարբնի մօտ կերթամ: այնտեղ էլ փուքս կայ, ձմեռն էլ տաք է. բայց մեծ ուժ պէտք է այդ գործի համար: Ահագին մոլորճով երկաթը ծեծել, որ նա տափակի,—ես այդ չեմ անիլ, ինչ կուզի լինի:

—Նալբանդը լաւ է: Մեխի ծայր սրել եւ պայտեր շտկել, այդ շատ դժուար չէ. բայց մէկ ամեհի ձիու ոտք բռնել, ծնկանը դնել—երկիւղալի է. ձիու աքաղին իմ ընկերները ապտակից թռնոգ է: Զէ՛, իմ կարծիքով դա լաւ արհեստ չէ:

—Ներձակութիւնը մաքուր արհեստ է, լաւ միտս ընկաւ: Բայց ի՞նչ եմ ասում: ամբողջ օրերով ծալպատակ նստել, գլուխ քաշ գցած կարել ու կարել, ոչ խաղալ կըլնի եւ ոչ վազվզել: Զէ՛, դա էլ բան չէ:

—Ինչո՞ւ չը գնամ, որմնադիր դառնամ, բարձր պատերի ծայրերին կանգնեմ, այնտեղից կանչեմ— «բար ու կիր տուէ՛ք, աղիւս ձգեցէ՛ք»: Այսպէս կը գոռամ եւ կը հրամայեմ, որ աշխարհք տեսնի, թէ ես վարպետ եմ, գործս լաւ գիտեմ: Բայց վայ թէ յանկարծ այդ բարձր տեղից ոտքս սլկըհի եւ թրմիալով ներքեւ գլորվեմ, հոգիս աւանդեմ: Զէ՛, այդ հեշտ գործ չէ եւ ոչ իմ բանն է:

—Երեւի չը կայ մի այնպէս արհեստ, որ ես հաւանեմ, գնամ սովորեմ: Թէ դիւրեացար դառնամ, ոտքս կըկտրեմ: կօշկակար դառնամ, ձեռքս կըծակեմ: ոսկերիչ դառնամ, մատներս կայրեմ: թէ բրուտ դառ-

նամ, ցեխ պիտի կոխ—տամ: վարժարան գնամ, գիր պիտի սովորեմ: Զէ՛, իմ կարծիքով, ամենից լաւ է՝ ոչինչ չը շինել, ոչինչ չը սովորել:

ԾԱՅԼ ԱՂՁԻԿ

Բանն ինչ կանեմ, կեղտոտ է,

Բամբակը կորիզոտ է.

Մետաքս պիտի որ մանեմ;

Մաստակ պիտի որ ծամեմ:

Կըտերը տիտիկ անեմ,

Անցնողին մտիկ անեմ:

Ուտե՛մ, խմե՛մ:

Մթնի՛, քնե՛մ:

Ա. Բ. Ա. Ծ. Ն. Ե. Բ

Իմացողին մին, չիմացողին հազար ու մին:—Իմացողին մէ՛կ ասա, չիմացողին հա կաց հա ասա:—Սեւին սապոնն ինչ անի, խեւին խրատն ինչ անի:—Ով որ երգի ամառը, նա պար կըգայ ձմեռը:—Մի բաժակ ջուր, ով ուզի տուր:—Էսօրուայ փուշը, էգուցուայ նուշը:—Հացն ուտելով, բանն անելով:—Ապրել կայ՝ երկաթ է, ապրել կայ՝ արծաթ է:—Չուի գողը ձիու գող կը դառնայ:—Տաշած քարը գետնին չի մնալ:—Մերանաս, ծերի պատիւն իմանաս:—Կուշտը քաղցածին մանր կը բրթի:

ՄԱՍՆԱՐԱԿ

Մանիր, մանիր, իմ ճախարակ,
Մանիր սիպտակ մալանչներ,
Մանիր թելեր հաստ ու բարակ,
Որ ես հոգամ իմ ցաւեր:

Չէթ եմ ածել ականջներըդ,
Նոր շինել եմ շրտուիկ,
Դէ՛հ, շուտ շարժիր լայն թւերըդ,
Ոստեր շինիր սրբուլիկ:

Մանիր մանիր իմ ճախարակ,
Լիսեռնիկդ պտըտիր,
Մանիր թելեր հաստ ու բարակ,
Իլկիդ վերայ փաթաթիր:

Տիգրանիկս գուլբա չունի,
Հանդ է գնում ոտաբաց,
Գաբրիէլս չուխա չունի,
Միշտ անում է սուգ ու լաց:

Մանիր մանիր, իմ ճախարակ,
Մանիր, սիպտակ փաթիլներ,
Մանիր թելեր հաստ ու բարակ,
Որ ես հոգամ իմ ցաւեր:

Չաւլ չունիք, լաթու չունիք,
Ոչ սամուէն, ոչ պարան,
Եյսպէս աղքատ դեռ եղած չեմք,
Կարուել է ամեն բան:

Դեռ հարս էի, որ գործեցի
Քանի կարպետ խալիչա,
Բայց դրանցից շուտ զրկուեցի,
Հիմա չունիմ մի քէչա:

Կարմիր օրըս երբ սեւացաւ,
Եւ պարտք մնաց թէև քիչ,
Պարտատիրոջ սիրան էլ սեցաւ,
Եկաւ տարաւ ամեն ինչ:

Մանիր, մանիր, իմ ճախարակ,
Մանիր սիպտակ քուլաներ,
Մանիր թելեր հաստ ու բարակ,
Որ ես հոգամ իմ ցաւեր:



Վ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ

ՕՏանն ու Վանին հանելուկներ էին ասում: Ինչ որ մէկն ասում էր, միւսը գտնում էր: Վերջը ՕՏանն ասեց.

— Այն ինչն է. «Տակը քար է, քար չէ. գլուխը քար է, քար չէ. խոտ կուտի, կով չէ. ձու կածի, հաւ չէ»:

Վանին շատ մտածեց, շատ բանի անուն տուաւ, չեղաւ, չը գտաւ: Յետոյ ասեց. չեմ գտնում՝ ասա տեսնեմ ինչն է:

— Դէ մի քաղաք տուր, ասեմ:

— Երեւանը քեզ:

— Ձեմ ուզում երեւանը:

— Շուշին քեզ:

— Շուշին էլ չեմ ուզում:

— Այլէքսանդրապօլ, Նոսիսի, Բաքու, Նախչուան.

— Ձեմ ուզում, չեմ ուզում, չեմ ուզում:

— Բա որը կուզես, ՕՏան:

— Թիֆլիսը:

— Է՛հ, քեզ լինի, դէ ասա:

— Դեռ ականջ դիր: Ուտեմ խմեմ՝ Թիֆլիս. հագնեմ մաշեմ՝ Թիֆլիս: Ես մի քահայան ձիւղ վերայ նըստեմ, դու մի լղար ջորու վերայ: Ես ուտեմ մաժուէ ու կաթ, դու ուտես բորբոնած ճաթ...

— Բաւական է, դէ ասա:

— Ասեմ այն է, որ վերան կանգնում ենք ու ասում. «Կօրն» կօրն, պապոնց տուն. կօրն, կօրն, պապոնց տուն»:

— Հա՛, իմացայ, Կրիան է:

Հիմա դուք ասացէք, ինչ հանելուկներ դիտէք:

Բ Ա Ռ Ա Խ Ա Ղ

Պօղոսն ու Պետրոսը բառախաղի էին տալիս: Պօղոսը վարժուած էր, իսկ Պետրոսը նոր էր սովորում: Ահա թէ ինչպէս էին խաղում:

Պօղոս. Պետրոս, ասա—տունը՞

Պետրոս. Տունը՞

Պօղոս. Քեզ կձի շունը՞:

Պօղոս. Ասա—դուրը՞

Պետրոս. Դուրը՞:

Պօղոս. Ընկնիս ջուրը՞:

Պօղոս. Ասա—պան.

Պետրոս. Պան.

Պօղոս. Ուտես թանէսպան:

Պետրոս. Էլ չեմ ասում: Հիմա ես կը հարցնեմ քեզ:

Պօղոս. Լա՛ւ, հարցրու:

Պետրոս. Ասա—ծիտ.

Պօղոս. Ծիտ.

Պետրոս. Ուտես մախոխ:

Պօղոս. Այդ չեղաւ, Պետրոս: Ես ասում եմ ծիտ, դու ասում ես մախոխ. այդ ինչպէս կարելի է. տեսնում ես նման չեն: Դեռ սպասիր, էլի ես կը հարցնեմ: Ասա—ծիտ է՞:

Պետրոս. Ծիտ է՞:

Պօղոս. Պետրոսն անմիտ է:

Պետրոս. Է՛հ, էլ չեմ ասիլ, Ես անմիտ չեմ:

Պօղոս. Լա՛ւ, շարունակենք, էլ այդպէս չեմ ասիլ:

Պօղոս. Ասա—հաւ է՞:

Պետրոս. Հաւ է՞:

Պօղոս. Պետրոսը լաւ է՞:

- Պօղոս. Ասա—սա՛նձ.
- Պետրոս. Սա՛նձ.
- Պօղոս. Պետրոսն ուտի տա՛նձ:
- Պետրոս. Հիմա ես կը հարցնեմ: ասա՛—ամի՞.
- Պօղոս. Ամի՞,
- Պետրոս. Շաքարը ծամի՞:
- Պետրոս. Ասա—հայ.
- Պօղոս. Հայ.
- Պետրոս. Մի քիչ կա՛ց:
- Պօղոս. Է՛հ, բաւական է, դու լաւերը չես իմանում:

ԾԱՌԵՐԻ ԳԱՆԳԱՏԸ

Մեր տուած փայտից կրակ են անում: տուն տա-
քացնում: Թոնիրը վառում, կերակուր եփում: փա-
փուկ հաց թխում: ուտում կշտանում: բայց մեզ չեն
յիշում: մեզ չեն պահպանում: այլ անգուլթ կերպով
մեզ կոտորում են, մեզ փչացնում, ոչնչացնում:

Մեր գերաններից շինում են տներ, գոմեր, մա-
րաքներ, ժամեր ու վանքեր. մեր տախտակներից—
յատակ, առաստաղ, աթոռ, պահարան, սեղան, նըս-
տարան, դուռ ու պատուհան եւ այլ շատ տեսակ
կահ ու կարասիք: Բայց մեզ չեն յիշում: մեզ չեն
պահպանում: այլ անգուլթ կերպով մեզ կոտորում են,
մեզ փչացնում, ոչնչացնում:

Մեր գերաններից ու տախտակներից կամուրջ են
շինում՝ գետերով անցնում: սայլեր են շինում՝ ամեն
ինչ կրում: գութան են շինում՝ հողերը հերկում:
լուծ, սամի շինում: եզ, գոմէշ լծում: օրօրոց շինում՝

մանկիկ օրօրում: քանոն են շինում՝ տետրակներ տո-
ղում: նաւեր են շինում: ծովի մէջ լողում: Բայց մեզ
չեն յիշում: մեզ չեն պահպանում: այլ անգուլթ կեր-
պով մեզ կոտորում են, մեզ փչացնում, ոչնչացնում:

Ո՛վ չի տանձ կերել, կամ կարմիր խնձոր. նուռ
եւ սերկեւիլ, կեռաս ու սալոր. դեղձ կարմրաթու-
շիկ, ծիրան անուշիկ: Հապա խաղողը... եւ քանի՛ տե-
սակ. կանաչ ու կարմիր, թուխթուխ ու սպիտակ. եւ
այդ ամենը մարգիկն են ուտում: Բայց մեզ չեն յի-
շում: մեզ չեն պահպանում: այլ անգուլթ կերպով
մեզ կոտորում են, մեզ փչացնում, ոչնչացնում:

Խելօք մանուկներ, դուք որ մեծանաք, մեզ խնա-
յեցէք, մեզ պահպանեցէք. եւ ձեր հանգերում, ձեր
պարտէզներում եւ այգիներում ծառեր տնկեցէք:

ԳԱՇՏ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Մարգիկ հերկում են դաշտերը եւ հատիկներ են
ցանում: մանուկները գնում են ուտումնարան եւ Աս-
տուծոյ խօսքերը սովորում: Հատիկները ծածկվում են
փափուկ հողի մէջ. Աստուծոյ խօսքը մտնում է մա-
տաղ սրտերի մէջ: Հողի տակ, խաւարումը չեն ննջում
սերմերը. չեն ջնջվում սրտիցը բարի ուսմունքները:
Սերմերը բուսնում են կանաչ ծիլերով. ուտումն աւանդ-
վում է խելօք խօսքերով: Սրտերը ծածկվում են ու-
կեզոյն հնձով. Տիրոջ խօսքը կատարվում է բարի գոր-
ծերով: Աստուած, ժամանակին տո՛ւր անձրեւ, արեւ.
Հայր, ամեցրու մեր մէջ բարութեան սերմեր:

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Դաշտը սիրուն է դալար բոյսերով
եւ անուշահոտ գոյն գոյն ծաղկներով.
Ուսումնարանը նոյնքան սիրուն է
Իւր ուշիմ: խելօք՝ ժիր մանուկներով:

Սիրուն է ծառը կանաչ ճղներով,
Փունջ փունջ կախտուած իւր պտուղներով.
Ուսումնարանը նոյնքան սիրուն է
Իւր առաքինի, խելօք սաներով:

Աստուած, պահպանիր դու շատ օրերով
Մեր անդաստանը իւր մշակներով.
Եւ մենք նորանում զուգուինք զարգարուինք
Գեղեցիկ ուսման գոյն գոյն փունջերով:

ԾԻԾԵՌՆԱԿ

Խեղճ ծիծեռնակը ամբողջ ցերեկը չի հանգստա-
նում: այլ միշտ թռչելով՝ դէս դէն ընկնելով՝ նիւթ
է հաւաքում:

Նիւթ է հաւաքում:—խոտ ու կաւ կրում, իւր
բունը շինում, բմբուլով լցնում, լաւ փափկացնում
եւ մէջը մտնում:

Մտնում է մէջը, երեք ձու ածում եւ երեք շա-
բաթ վերան թուխս նստում: ձագուկներ հանում:

Փափիկ ձագերը դուրս եկան թէ չէ, մայրը
թռչում է, դէս ու դէն ընկնում: մթեղներ բերում:
նրանց կերակրում:

Մի քիչ ժամանակ որ անց է կենում: սիրուն
ձագերը թեւաւորվում են: բնից դուրս թռչում եւ
իրանց մօր հետ ճանապարհ ընկնում,—լայն-լայն
դաշտերի, խոր-խոր ձորերի, մութ անտառների,
բարձր սարերի, կապոյտ ծովերի վրայից անցնում,
հեռու տեղ գնում:

Ձմեռն անցնում է, գարունը մտնում: մեր ծի-
ծեռնակը էլի գալիս է իւր բունը գտնում: ճչում
ծլլլում, քանդուածը շտկում, կարկատում, շինում,
նոր ձուան ածում: նոր ձագեր հանում: պահում
մեծացնում: աշնան ժամանակ, առաջուկայ նման ճա-
նապարհ ընկնում: Լայն-լայն դաշտերի, խոր-խոր
ձորերի, մութ անտառների բարձր սարերի, կապոյտ
ծովերի վրայից անցնում: հեռու տեղ գնում:

ԵՐԳ ՊԱՆԴԻՏԻ

Ծիծեռնակ, ծիծեռնակ, դու գարնան սիրուն թռչնակ,
Դէպի ո՞ւր, ինձ ասա, թռչում ես այդպէս արագ:

Ա՛խ, թռիր, ծիծեռնակ, ծնած տեղս՝ Աշտարակ.
Անդ շինիր քո բունը—հայրենի կտուրի տակ:

Անդ հեռու ալեւոր հայր ունիմ սգաւոր,
Որ միակ իւր որդուն սպասում է օրէօր:

Երբ տեսնես դու նրան, ինձնից շատ բարեւ արա,
Ասա՛ թող նստի լայ իւր անբախտ որդու վրայ:

Դու պատմիր՝ թէ ինչպէս աստ անտէր ու խեղճ եմ ես,
Միշտ լալով՝ ողբալով՝ կեանքս մաշուել, եղել կէս:

Ինձ համար ցերեկը մութ է շրջում արեգը,
 Գիշերը թաց աչքիս քունը մօտ չի գալիս:
 Շուտով սառ հողի տակ կը պառկիմ այստեղ մենակ.
 Թողնելով հօրս սրտում ցաւալի յիշատակ:
 Դէ՛հ, սիրուն ծիծեռնակ, հեռացիր, գնա՛ արագ
 Դէպ հայոց աշխարհը, ծնած տեղս—Աշտարակ:

Մ Ե Ղ Ո Ւ Ն Ե Ի Մ Ա Ր Դ Ը

Մեղուն մէկ անգամ հարցրեց իր տիրոջը.
 —Քո կենդանիներից ո՞րն է ամենից օգտակարը:
 —Գիտեմ. դու երեւի կարծում ես, թէ ամենից
 օգտակարը դու ես, բայց սխալվում ես, պատասխա-
 նեց տէրը:
 —Ի՞նչպէս, տէր. ո՞րն է այն կենդանին, որ ին-
 ձանից աւելի օգտակար է:
 —Ոչխարը:
 —Ս, յդ հաշիւ չէ, տէր. ոչխարը իմ հասակա-
 կիցս չէ: Նա մի ահագին կենդանի է, իսկ ես մի
 միջատ: Դու պէտք է ինձ իմ ընկերների հետ հա-
 մեմատես.
 —Շատ բարի: Շերամը քեզ պէս փոքր է, բայց
 քեզանից շատ օգուտ է տալիս:
 —Շերամը ո՞րն է:
 —Շերամը այն իմաստուն որդն է, որ մեզ հա-
 մար իր նման քնքուշ մետաքս է շինում:
 —Հա՛, իմացայ: Ս, յդ այն շատակեր ճիճուն չէ՞,
 որ անդադար կերակրում էք թուլի տերեւով:
 —Նա ինքն է:

—Բայց գիտես, տէր, նրա չափ որ մեզ էլ
 կերակրէք, մենք մեղրի տեղ ոսկի կը շինենք ձեզ
 համար: Դուք ոչ մի կենդանի չունիք, որ իր կերա-
 կուրը մեզ նման ինքը լինի շինելիս եւ ուրիշին էլ
 բաժին լինի տալիս: Ա, յնպէս չէ՞, պարոն:
 —Ս, յո՛, այդ կողմանէ դու ուղիղ ես. մենք
 դէպի ձեզ շատ ապերախտ ենք, որովհետեւ բոլորո-
 վին անխնամ ենք թողնում ձեզ...
 Մեղուն ուրախացաւ տիրոջ պատասխանիցը եւ
 թռաւ նստեց վարդի թուփի վերայ:

Մ Ե Ղ Ո Ւ

Հա՛ ծագեցաւ արեգակը,
 Հա՛ ծաղկեցաւ մանուշակը,
 Մեղուն թողեց իր փեթակը
 Տըզտըզալով, տըզտըզալով:
 Մեղուն թռաւ ծաղկէ ծաղիկ,
 Մեղրը առաւ քաղցր-անուշիկ,
 Մումը տարաւ հոտոտ, լուսիկ
 Պըզպըզալով, պըզպըզալով:
 Անուշ մեղրը՝ մանր տըղոց,
 Դեղին մումը՝ ամեն սըբոց,
 Իսկ չարերին կըճ ու խայթոց.
 Կըսկըճալով, կըսկըճալով:

ԿԵՆԳԱՆԻՆԵՐԻ ՎԷՃՐ

Եզր, Կովը եւ Շուկը վիճում էին միմեանց հետ եւ ամեն միւրը պնդում էր, թէ մեր տէրը ամենից շատ ինձ է սիրում:

— Իհարկէ, նա ինձ ամենքիցդ շատ է սիրում, ասում է Եզր. եւ գիտէ՞ք ինչու համար: Նորա համար որ, ես եմ նորա արօրն ու տափանը քաշում: Ես եմ նորա համար անտառից փայտ բերում: Նա ինձ է լծում սայլումը եւ իւր ցորենը տանում ջազաց, այնտեղ ալիւր շինում: յետոյ էլի ես եմ տանում քաղաք, ուր նա ծախում է այդ ալիւրը եւ իւր տան համար առուտուր անում: Երեխանց համար հագնելիք առնում: Ուրեմն, դուք ի՞նչ էք կարծում: Ես որ չը լինէի, նա ի՞նչպէս կարող էր ապրել:

— Այդ ճշմարիտ ես ասում, ասաց Կովը: Բայց մեր տէրը ինձ ամենքիցդ աւելի որ սիրում է, այդ նորա համար է, որ նա իմանում է, որ քեզ նման աշխատասէր ու ժրջան Եզրուկին ես եմ պահել մեծացրել: Այս մէկ: Մէկ էլ որ, ես նորա բոլոր գերդաստանը իմ կաթովս եմ պահում: Այն մածուկն ու կարագը, այն սերն ու կաթը, այն եղն ու պանիրը, այն տաք տաք թանէ սպանը, որ ամեն օր խրպշտում են, ո՞ւմ տուածն է: Տեսնում էք ուրեմն, որ եթէ ես չըլինիմ, բոլորը քաղցած կը կոտորուին:

— Դու էլ ես ճշմարիտ ասում, սիրուն Կովիկ, սկսեց Շուկը: Ո՞վ կարող է ուրանալ քո լաւութիւնը: Շատ անգամ ես ինքս էլ եմ մասնակից լինում քո տուած անուշ թանին: Մեր տանտիկինը ամեն խնոցի հարելիս՝ թանիցն ինձ բաժին է տալիս: Ով որ քո

լաւութիւնն ուրանայ, երկու աչքով կուրանայ: Ես շատ երախտագէտ եմ, ոչ ոքի լաւութիւն չեմ կարող ուրանալ: Բայց գիտէ՞ք ինչ կայ: Դուք մի նեղանաք, որ մեր տէրը ինձ ամենքիցդ էլ շատ է սիրում: Դորա համար մեծ պատճառ կայ. եւ ահա ասեմ: Թէ ինչ է դորա պատճառը... Շուկն սկսեց մէկ մէկ հաշուել, թէ ինքը ինչ ու ինչ է անում:

Ասած է՝ շուկը որ հասել սկսի, էլ չի դադարիլ: Այնքան հասեց Եզրն ու Կովի հետ, որ տէրն իմացաւ, գնաց նորանց մօտ, շան լեզուիցն ազատեց, ասելով. «Թող տուր դորանց, Բողոր, դու չգիտես որ ամենքդ էլ ինձ հարկաւոր էք. ոչ մէկդ միւսի արածը չէք կարող անել. այդ պատճառով ես ձեզ ամենքիդ էլ սիրում եմ, դուք էլ սիրեցէք միմեանց:

Կ Ո Ր Ա Մ Հ Ո Ր Թ

Ձիւն էր գալիս փաթիլ փաթիլ,

Հետն էլ անձրեւ կաթիլ կաթիլ:

Այդ միջոցին մի պառաւ կին

Հորթ էր փնտռում գաշտի միջին:

Կովը եկաւ տաւարիցը,

Կուրծք ու ծծեր կաթով լիքը:

«Հորթուկս ո՞ւր է», նա բառանչեց,

Խեղճ պառաւին լացացրեց:

Մինչ դեռ այսպէս պառաւ ու կով

Ողբում էին լաց ու կոծով,

Յանկարծ լսուեց մի բարակ ձայն:

Կովն իմացաւ, որ հորթն է այն:

Կողմը վազեց բառանչելով,
Պառաւր զնայ տնքտնքալով.
Կորած հորթը մօրը գտաւ,
Լիք ծծերը բերանն առաւ:

Ծծեց բոլոր կաթն ու տուզեց
Տանտիկնօր բան չը թողեց,
Բայց պառաւը այս անգամին
Սիրով ներեց չար հորթուկին:

ՄԵՂՈՒՆ ԵՒ ԱՂԱԻՆԻՆ

1. Փ Ո Ր Զ Ա Ն Ք

Ժրաջան Մեղուն ծաղկալից դաշտում իւր մեղրի
համար նիւթ էր հաւաքում: Արեւի տակին շատ աշ-
խատելով՝ նա բեզարեցաւ եւ ծարաւեցաւ:

Նրանից մօտիկ մի փոքրիկ լիճ կար: Մօտեցաւ
լրճին, վէր եկաւ ափին, որ քիչ ջուր խմի՝ ծարաւը
կտորի, նոր ուժ ստանայ, թռչի տուն գնայ, Հէնց
որ կուացաւ, որ ջուր կում անի, յանկարծ գլորուեց,
ընկաւ ջրի մէջ: Նա շատ աշխատեց, որ ցամաք
դուրս գայ, բայց մի փոքր ալիք նորան ներս բաշեց,
ափից հեռացրեց:

Այսպէս խեղճ մեղուն ցամաքից զրկուեց, ջրրի
երեսին թեւերը փռեց եւ յոյսը կտրած՝ մնաց մեկ-
նուած:

2. ՕԳՆՈՒԹԻՒՆ

Որտեղից որտեղ՝ օգնութեան հասաւ մի շատ
բարեսիրտ սիրուն Աղաւնի: Բարի Աղաւնին մօտեցաւ
լրճին եւ նայեց տեսաւ մեր խեղճ Մեղուին՝ յուսահատ
փռուած ջրի երեսին: Իսկոյն ըշտապեց, մի տերեւ
կտցեց եւ տարաւ Մեղուի առջեւը ձգեց:

Մեղուն բարձրացաւ տերեւի վերայ, խելքը ժո-
ղովեց, դէս ու դէն նայեց, որ տեսնի ով էր իր ա-
զատողը, մահից փրկողը: Եւ տեսաւ իր մօտ բարի
Աղաւնուն: Շատ նայեց վերան եւ ուզեց խօսել, Աղաւ-
նուն գովել, շնորհակալ լինել, Բայց մեր բարեսիրտ սի-
րուն Աղաւնին շատ լաւ իմացաւ Մեղուի միտքը,
եւ ոչինչ չուզեց խել նրանից, այլ թռաւ գնաց, որ
ուրիշ տեղ էլ նոյն բարիքն անէ:

3. ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Մի օր մեր մեղուն նոյն դաշտի միջին մի սիրուն
ծաղկից նիւթ էր ժողովում եւ տղազալով Աղաւ-
նուն գովում: Մեղուի հանդէպ, մի ծառի վերայ
նստած ննջում էր ծանօթ աղաւնին:

Հէնց այդ ժամանակ Մեղուն նկատեց, որ ահա
մէկ մարդ, հրացանը ձեռին, մէջքը կուացրած,
չար օձի նման սողում է սուս փուս գէպի Աղաւ-
նին: Մեղուն հասկացաւ որ դա չար մարդ է, ան-
գուժ որսորդ է, ուզում է սպանել անմեղ թռչունին,
իր բարերարին: Եւ ճշմարիտ որ այդ էր այն մարդու-
չար նպատակը:

Որսորդը չոքեց, տեղը պնդացրեց եւ հրացանը երեսին բռնեց: Հէնց մատը դրեց կայծառի ոտքին եւ ուղեց քաշել, գործը վերջացնել: այդ իսկ րոպէին կայծակի նման Մեղուն վրայ հասաւ եւ չար որսորդի ձեռքն այնպէս խայթեց, որ նա վեր ցատկեց: Նորա հրացանը նշանից շեղուեց եւ իր թնդիւնով անմեղ Աղաւնուն քնից դարթեցրեց եւ տեղից թռցրեց:

Այսպէս մեր Մեղուն իր բարերարին վերահաս մահից փրկեց ազատեց:

Ա Ս Ս Ծ Է .

Ինչ որ ցանես, այն կը հնձես:

Արած լաւութիւնը չի կորչիլ:

ՓՈՔՐԻԿ ԳԱՌԸ

Մէկ փոքրիկ գառ, ձիւնի նման մաքուր, սպիտակ,

Մի օր քնաց մօր հետ դաշտը, որ արածի:

Նա իւր կամքին սկսեց թռչել քարերի տակ

եւ չէր ուզում փոքր միջոց հանգիստ նստի:

Այս ու այն կողմ վազվզելով չափ էր ընկնում:

Թէ քար, թէ ժայռ, թէ փոս, թէ ձոր չէր հարցընում:

— Ո՛րդեակ, հանդարտ, ձայն էր տալիս նորա մայրը:

Ձգո՛յշ կացիր, ո՛րդեակ, լսիր իմ խրատը:—

Իայց գառնուկը մօր ասածին ուշ չի դարձնում:

Իւր խաղալն ու վազվզելն է շարունակում:

Եւ վերջապէս երբ մօր խօսքին ականջ չարաւ,

Սարի գլխին իւր գգութեան պատիժն առաւ:

Մի մեծ քար կար այնտեղ ընկած. նորա ծայրում

Մեր գառնուկը թռչկոտալով խաղ էր անում:

Մէկ էլ յանկարծ նորա վրայից գլորուեցաւ:

Ոտի մէկը քսան տեղից փշրուեցաւ:

ՄԵՂՈՒՆ ԵՒ ՀՍԻԸ

Հաւր Մեղուի վրայ ծիծաղելով՝ ասաց մէկ անգամ:

— Ի՞նչ անշնորհք ճանճ ես դու. ամբողջ օրը ծաղկից ծաղիկ ես թռչկոտում եւ ոչ մի բանի պէտք չես գալիս:

— Իսկ դու, հաւի՛րկ մարիկ, ի՞նչ ես շինում. հարցրեց Մեղուն:

— Միթէ չը գիտե՞ս, թէ ինչ եմ շինում ես. Քեզ նման պարագ սարապ չեմ տգողացնում: Ես օրը մէկ ձու եմ ածում, մէկ ձո՛ւ. գիտե՞ս մէկ ձուն քանիսն է:

— Գիտեմ, գիտեմ, հասկացայ: Բայց ես մինչեւ հիմա կարծել եմ թէ դու օրը հարիւր ձու ես ածում:

— Ի՞նչպէս կարելի է օրը հարիւր ձու ածել, անխելք մեղու:

— Հապա եթէ քո ածածդ ընդամենը մի ձու է, էլ ինչո՞ւ ես հարիւր անգամ կրկնում, թէ հայ, հարայ, լսեցէ՛ք, իմացէ՛ք, որ ես ձու եմ ածել: Իմ կարծիքով այդքան կրկնալուն մի ձուն շատ քիչ է. Այնպէս չէ՞, իմաստուն հաւիկ մարիկ:

— Բայց դու ի՞նչ ես շինում: դո՛ւ, որ մի ձուն քիչ ես համարում:

— Ես ինչ որ շինում եմ, քեզ պէս կրկալով չեմ
յայտնում ուրիշներին: Ես գլուխս քաշ գցած մեղր
եմ շինում: Գիտե՞ս ինչ է մեղրը: Դա հաւի կերա-
կուր չէ, քո խելքի բանը չէ, հաւիկ մարիկ:

ՊՍԱԿՆԵՐ

Վարդ ծաղկին լինինք նման

Եւ օրինակ հեղութեան.

Թող վարդը հանգստանայ

Մեր մատաղ սրտի վերայ:

Ազնիւ սիրուն մանուշակ:

Համեստութեան օրինակ,

Տուր մեզ ծաղիկ գեղեցիկ,

Քո քնքոյշ հոտ անուշիկ:

Օրինակ անմեղութեան,

Դաշտի սիրուն դու շուշան,

Եկ զարդ եղիր մեր պարին,

Եկ միացիր մեր երգին:

Կանաչ խոտը դաշտերի

Մեր սրտին է սիրելի.

Թող ոստը կաղնի ծառին

Պսակ լինի մեր գլխին:

Սիրուն կանաչ պսակին

Թող միանանք, բարեկամք.

Եւ յոյսերս անբաժան

Մնան մեզնից յաւիտեան:

ՈՍԿԻ ԵՒ ԵՐԿԱԹ

Ոսկին Երկաթին արհամարհելով, ասաց մէկ ան-
գամ. — Երանի գիտենամ, դու ինչացո՞ւ ես, որ մե-
տաղների կարգն ես ընկել. քո սեւ ու ժանգոտ երե-
սովդ մարդու վերայ զզուանք ես բերում: Նայիր
ինձ վերայ. տես ի՞նչպէս գեղեցիկ եմ փայլում, ինչ-
պէս շողշողում: Նայիր մեր սիրուն օրիորդների ու
հարսների ականջներին ու մատներին, դու կըտես-
նես իմ փառքն ու պատիւը. նայիր նոցա ճակատ-
ների շարքերին, դու կըտեսնես իմ փայլն ու գեղեց-
կութիւնը. նայիր նոցա պարանոցներին ու կուրծքե-
րին: դու կըտեսնես իմ մանեակների ու շղթաների
նրբութիւնը: Զեմ հաշվում ապարանջանները, գըն-
տասեղները. գիտեմ որ դու այնքան կոշտ ու կոպիտ
ես, որ այգպէտ քնքոյշ բաների վերայ ոչ ճաշակ ու-
նիս, ոչ հասկացողութիւն:

Երկաթը պատասխանեց Ոսկուն.

— Ես չեմ ուրանում, Ոսկի աղա, որ դու գեղե-
ցիկ ես. ամեն բանի զարդն ու զարգարանքը դու ես.
գինըդ շատ բարձր է, աղքատի բան չես. բայց ինչո՞ւ
ես չափիցդ դուրս գոռոզանում: Քո սիրուն օղակներդ
ոչ ականջի լսելիքն են աւելացնում, ոչ մատներին ու
կռներին զօրութիւն ու ժրութիւն տալիս: Ճակատ-
ների փայլուն շարքերը գլխին խելք չեն տալիս. ոչ
կուրծքերի նուրբ մանեակները՝ սրտին գուլթ ու
խնամք:

Ի՞նչ ասեմ մեր օրիորդներին, որ քեզ այդ-
չափ պատիւ են տալիս, քեզ համար հալվում, մաշ-
վում ու բարակացաւ ընկնում: Իմ մի փոքրիկ ասեղը

քո բոլոր զարգարանքներից աւելի է օգուտ տալիս: Գիտե՛ս, ոսկի ազա, իմ փոքրիկ ասեղը քանի՛ տուն է պահում: քանի՛ որբի կերակրում: Իմ խոփն ու ձեւիչը ամբողջ աշխարհքին հաց են տալիս:

Մարգիկ ինչ որ շինում են, կամ պէտք է կրտրեն, կամ պէտք է տաշեն, կամ պէտք է ծեծեն, կամ պէտք է սղոցեն, կամ պէտք է խարտոցեն, կամ պէտք է կարկատեն, Իմ ուրագն ու կացինը որ չը լինին, իմ գուրն ու շաղափը, իմ սղոցն ու մուրձը, իմ կտրիչն ու խարտոցը—էլ կարո՞ղ էին մարգիկ քար քարի վերայ դնել, փայտ փայտի վերայ:

Ահա այդպէս պարծենկոտ ես գու, Ոսկի՛ ազա. քո փայլից կուրացած՝ ուրիշի լաւութիւնը չես տեսնում:

ԱՐՇԱԿԻ ՇԱՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Երկար ժամանակ սպասում էի՝ թէ երբ պէտք է ինձ ուսումնարան տանեն: Ուսումնարանի մտողն անցնելիս որ լսում էի աշակերտների երգելու ձայնը, սիրտս մի ուրիշ կերպ էր դառնում. մտքումս ասում էի. ա՛խ, երբ կը լինի, որ ես էլ դրանց մէջը լինիմ: դրանց պէս կարգամ, դրանց պէս երգեմ, դրանց հետ խաղամ: արգեօք՝ կարժանանամ այդ օրին:

Վերջապէս փափագիս հասայ: Հայրիկս մի առաւօտ ինձ յայտնեց, թէ երկուշաբթի օրը քեզ տանելու եմ ուսումնարան, եւ այսօր պէտք է գնամ քո ուսման պիտոյքներն առնեմ: Այդ օրը էլ ես հաց չը կերայ չափազանց ուրախութիւնիցս:

Երեկոյին հայրս եկաւ տուն: Ի՛նչ ասես որ չէր առել ինձ համար.—թուղթ, թանաք, թանաքաման, դասագիրք, տեսակ տեսակ գրչաճայրեր, գրչակոթեր, գրատախտակ, քարեգրիչներ, մատիտներ, մի քառակուսի քանոն, մի սիրուն գրչահատ: Այդ բոլորը ջոկ ջոկ թղթերում փաթաթեցի ու դրի պահարանումս: մինչեւ հասաւ երկուշաբթին—ուսումնարան գնալու օրը:

ԽԵԼՕՔ ԵՐԵՒԱՅԻ ԵՐԳԸ

— Ինչո՞վ պէտք է մեր սրտերը ազնուացնենք, եւ մեր միտքը փայլուն լուսով պայծառացնենք.

— Ինքնակրթութեամբ միայն:

Ինքնակրթութեամբ:

— Ինչո՞վ պէտք է մեր ծնողացն ուրախացնենք, Ընկերաց մէջ ազնիւ, բարի անուն վաստակենք.

— Առաքինութեամբ միայն,

Առաքինութեամբ:

— Ինչո՞վ պէտք է մեր փափագին շուտով հասանենք, Ամեն տեսակ դժուարութեանց հեշտութեամբ յաղթենք.

— Զանափրութեամբ միայն,

Զանափրութեամբ:

ԱՅՍՈՐՈՒԱՆ ԳՈՐԾԻ ՎԱՂՈՒԱՆ ՄԻ՛ ԶԳԻՐ

Ջանասէր մանուկը լուսամտի առաջը նստած պատրաստում էր իւր դասերը, իսկ փայլուն արեւի շողքն ընկնելով նորա գրքի վերայ՝ դուրս էր հրաւիրում նորան ասելով.— Սիրո՛ւն մանկիկ, բաւական չէ՞ քիչ կարգա՝ դուրս արի քիչ էլ խաղա՛։ Մանուկը նորան պատասխանում է.— Ո՛չ, պայծառ արեւիկ, ոչ ես հիմա խաղալու չեմ, պէտք է դասերս վերջացնեմ։

Մանուկը շարունակում է իւր գործը։ Մէկ էլ մի սիրուն թռչնակ թռթռալով գալիս է իջնում պատուհանի վերայ եւ ծլիլալով ասում.— Սիրուն մանկիկ, բաւական չէ՞ ինչքան կարգացիր, դուրս արի երգիր, խաղա՛, գուարճացիր։ Իսկ մանուկը պատասխանում է.— Ո՛չ, սիրուն թռչնակ, ոչ ես դեռ չեմ կարող խաղալ ու երգել, քանի որ դասերս դեռ չեմ պատրաստել։

Մանուկը շարունակ գրում է ու կարդում։ Բայց հիմա էլ կարմիր կեռասն է երեւում նրա աչքին ու փսփսում ականջին, թէ բաւական չէ՞ ինչքան գրեցիր. արի իմ ծառիս վերայ բարձրացիր, հասած կեռասներս կեր ու կշտացիր։ Իսկ մանուկը պատասխանում է.— Շնորհակալ եմ այժմ գործ ունիմ, ախորժակ չունիմ։

Վերջապէս գործն աւարտեց. ոչ ոքի խօսքից չըխաբուեց, իւր դասերը լաւ պատրաստեց, յետոյ դէպի այգին վազեց եւ համարձակ ձայնով գոչեց.

— Այն ո՛վ էր որ ինձ հրաւիրում էր եկէք, այժմ ես պատրաստ եմ ամենիդ առաջարկութիւնը կատարել։

Այնուհետեւ արեգակն էլ աւելի գեղեցիկ էր թլում նորան, թռչնակն էլ աւելի սիրուն ու քաղցր էր երգում, իսկ կեռասներն աւելի հասուն պտուղ ընծայում։

ԱՌԱԻՕՏԵԱՆ ԵՐԳ ՇԻՆԱԿԱՆԱՅ՝

Այ մարդ, այսօր շատ քնեցար ննջեցիր,
Առաւօտեան հով ժամանակն անցուցիր.
Արեգակը ծովի ծայրէն ծագեցաւ,
Զերմութիւնը ձորն ու դաշտը փռուեցաւ։

Ընկերներըդ վաղ արտերը գնացին.
Յորեն, գարի գերանդիով հնձեցին.
Խուրձ կապեցին, բարդ բարդեցին դաշտումը,
Նստան հանգչիլ կաղնիների հովումը։

Այ մարդ, վեր կաց, սառը ջրով լուացուիր,
Գօտիդ կապիր, գերանդիդ առ, դաշտ հասիր.
Քանի հով է, հունձդ արա արտումդ,
Հունձդ հնձէ, մի ծուլանար գործումդ։

Ի՞նչ ես պարկել, ի՞նչ ես քնել, սիրական,
Արեգական շողը հասաւ մեր դռան.
Մի՛ ծուլանար, ժամանակդ խնայէ,
Այն պիտի մեզ բոլոր ձմեռը կերակրէ։

Ն Ո Ր Տ Ա Ր Ի

Ահա հասաւ նոր տարի,
 Հետը բերեց նոր բարի—
 Մանր տրղոց ուրախ օր,
 Բարի զաւակ հօրն ու մօր:

Մանր տղայքն են ուրախ,
 Ունին կազին, կօզինախ,
 Սալորի չոր, չամիչ, թուզ,
 Փշատ, ունապ ու ընկուզ:

Մանր տղայք, չը մոռնաք,
 Աշխարհումս չէք մենակ:

Ուրիշ շատ խեղճ տղայք կան,
 Աղքատ ու անօգնական:

Նորա հայր ու մայր չունեն
 Սեւ չոր հացի կարօտ են:

«Աղքատներին ողորմած
 Եղէք» կասէ ձեզ Աստուած:

ՏՂԱՅՈՅ ԱՂՕԹՔ

Հայր մեր երկնաւոր, Հայր ամեն մարդի. Դու ինձ
 ամեն օր տան հազար բարի— կեանք, լոյս, կերակուր,
 հայր ու քաղցրիկ մայր, մեծ ու փոքրիկ քոյր, անու-
 շիկ եղբայր. Իսկ ես ի՞նչ ունիմ, որ ինչ տամ քեզի.
 Առջեւդ կրնկնիմ, կենամ աղօթքի. «Շնորհրդ տուր
 ինձ, որ ծնողներիս, ուսուցիչներիս եւ իմ մեծերիս լի-
 նիմ սիրելի իսկ քեզ հաճելի»:

ԱՌՍԻՕՏԵԱՆ ԱՂՕԹՔ

Ով տէր մեր զթոտ,
 Դու լոյս առաւօտ,
 Ծագիր և մեզ մօտ
 Քո լոյսդ անաղօտ:

Թող լուսաւորուին
 Մեր միտքն ու հոգին,
 Որ քո լոյս անուան
 Լինինք փառաբան:

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

Հ Ա Յ Ր Մ Ե Ր .

Հայր մեր, որ երկնքումն ես, սուրբ լինի քո ա-
 նունը. գայ քո թագաւորութիւնը. քո կամքը լինի
 երկրիս վերայ էլ, ինչպէս որ երկնքումն է: Մեր ամեն-
 օրուայ հացը մեզ այսօր էլ տուր: Թող մեր այն պարտ-
 քերը, որ քեզ պարտական ենք, ինչպէս որ մենք թո-
 զում ենք մեզ պարտ եղողներինը: Թոյլ չը տաս, որ
 մենք փորձանքի մէջ ընկնինք, այլ փրկիր մեզ չար
 բաներից, որովհետեւ միայն դու ունիս յաւիտենա-
 կան թագաւորութիւն, զօրութիւն եւ փառք:

— Ամէն:

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ

Հայր մեր՝ որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն
քո. եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո, որ-
պէս յերկինս եւ յերկրի: ԶՀաց մեր հանապազորդ
սուր մեզ այսօր: Թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ
մեր թողումք մերոց պարտապանաց. եւ մի տանիր
զմեզ ՚ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ՚ի չարէ. զի
քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւի-
տեանս. ամէն:



ՅԱԻԵԼՈՒԱԾ

ՀՆԶԻԻՆԱԽԱՂ

(Ծտի լեզու, ծածկալեզու, ըծերէն)

Վաղարշապատցի երկու մանուկ, ութ ութ տա-
րեկան՝ շատ վարժ խօսում էին ծտի լեզուով: Դրանց
մէկի անունը Տիգրան էր, իսկ միւսինը՝ Մինաս: Մէկ
օր դրանք իրար փորձում էին՝ որ տեսնեն ո՞րն է
իրանցից աւելի լաւ խօսում:

Տիգրան. Արշակ՝ արա իմացիր ինչ եմ ասում: «ըզը-
հըզաց ըզեմ ուզըտըզում»:

Մինաս. Իմացայ. ասում ես՝ «Հաց եմ ուտում»:

Տիգրան. Դէ էլի իմացիր՝ ինչ եմ ասում: մըզինըզա-
սըզը. յըզիմըզար ըզէ»:

Մինաս. է՛յ՛ այդ ի՞նչ ես ասում: ասում ես՝ «Մինասը
յիմար է»:

Տիգրան. Լաւ. ես հիմա այնպէս կասեմ՝ որ դու չես
իմանալ: Տես ինչ եմ ասում: «Բկըդըկու ըկը-
լըկաւ ըկըտըկաղըկա ըկըչըկես»:

Մինաս. Ասում ես «դու լաւ տղայ չես»: Հիմա ես
քեզ կասեմ՝ տեսնեմ դու կը գըտնես: Լսիր:
«Բծըդըծու ըծըլըծաւ բըծանըծեր ըծըչըծես
ըծասըծում»:

Տիգրան. Հասկացայ. ասում ես՝ «դու լաւ բաներ չես
ասում»: Դէ հիմա արի խօսենք:

Մինաս. Ինչո՞վ.

Տիգրան. Զըյով: Դէ լսիր: «Ըզըզըըընըզանք թուզը-
թըզը ուզըտըզենք»:

Մինաս. Ըզըըզատ ըզըըզաւ, գըզըընըզանք ուզը-
տըզենք:

Տիգրան. Յըզեաըզոյ գըզընըզանք լըզիճըզումըզը լը-
զոզըզանըզանք:

Մինաս. Ըզես չըզեմ՝ լըզոզըզանըզայ, վըզախըզումը-
զեմ:

Այս լեզուով խօսում են երեք տեսակ—պարզ, միջակ և
գոթուար: Օրինակ «քար» կարելի է երեք տեսակ ասել. պարզ—
բըզար, եթէ սորա մէջ տեղից վերացնենք ըզ մասնիկը, տեղը
կը մնայ միայն քար: Միջակ—ըզըբըզար, Սորանից պէտք է վե-
րացնենք ըզը և ըզ: Գոթուար է լինում հասկանալը, երբ որ
մի ըզ էլ վերջիցն են կպցնում, օրինակ ըզըբըզարըզ:

Այսպէս խօսում են փոքրիկ անգրագէտ մանուկները, Որ-
քան սրամիտ են:



2013

3230

« Ազգային գրադարան



NL0062234

